

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՎԻՃԱԿ

ԵՒ

ԸՆԴՀ. ԶՕՐԱԿՈԶ

ԽԻՍՏ ԾԱՆՐԱԿՇԻՌ ԿԱՑՈՒԹԻՒՆ

Ազրբեջանական ուժերու յառաջխաղացքով հայկական դիւղերու գրաւումէն ետք, թշնամիին վերահսկողութեան ենթարկուած է նաեւ Սարսանդի ջրամբարը: Ստեղծուած ռազմաքաղաքական ծանր կացութեան առջեւ ԼՂՀ-ի Գերագոյն Սորհուրդը պատերազմական վիճակ հռչակած է Օգոստոս 13-ին, հեռագրելով Լեւոն Տէր - Պետրոսեանի: Յայտարարուած է նաեւ 18 -- 45 տարեկան այր մարդոց զօրակոչ եւ դիմում եղած է Հայաստանի իշխանութիւններուն որ աջակցին զօրակոչի ենթակայ ԼՂՀ-ի բնակիչները Արցախի վերադարձնելու գործին, արդելք հանգիստնալով Հայաստանէն անոնց հեռանալուն: Այս մասին լրագրողներու հազորդած է Հայաստանի Նախագահի մամուլային քարտուղար Ռուբէն Ծուկարեան, աւելցնելով որ այսօր Ռուսաստանի մէջ կան ուժեր որոնք չահագրդուած են Ղարաբաղի պատերազմին մէջ Ազրբեջանի նախաձեռնութեան պահպանումով: Իսկ ԼՂՀ-ի բարոյահոգեբանական ծանր կացութիւնը անմիջական հետեւանք է Հայաստանի ներքին անկայուն վիճակին:

Պատերազմական վիճակի հռչակման եւ քնդհանուր զօրակոչի այս լուրերուն բաւական լայն արձագանգ կուտային Օգոստոս 14 թուակիր «Լը Մոնտ», «Բոքիտիէն տը Փարի», «Լիպերապիռն», աւելի կարճ՝ «Լը Ֆիկառո»: Կը հաստատէին թէ գլխաւորաբար Մարտակերտի շրջանի 5 դիւղերու՝ Հաթերք, Մաղաւուղ, Մոխրաթաղ, Գետաւանի եւ Զարգախաչի անկումէն ետք է որ այս որոշումները տրուած են եւ այս կորուստներն ալ կը վերադրուին այն խուճապին, որ ստեղծուած է Հայերու մօտ Արծուաչէնի գրաւումէն ետք Ազերիներու կողմէ, լրսած է նաեւ Ռ. Ծուկարեան: ՀԱՊ-ի կեդրոնական հեռատեսիլն ալ յայտարարած է թէ Ազերիները նոր յարձակումի մը ձեռնարկած են Կրասնոսելսկի շրջանը բաւական զոհեր սրտոճառելով (15-էն 40), բայց, Ուրբաթ, Օգոստոս 14-ին մեր առած տեղեկութեանց համաձայն, Հայերը ետ մղած էին յարձակումները եւ կացութիւնը չըջուած էր:

Փրանսական վերոյիշեալ թերթերը կ'արձագանգէին նաեւ ձախողած պետական հարուածի մը Ազրբեջանի մէջ, ըստ ներքին նախարար Իսքէնտէր Համիտովի յայտարարութեան: Չէ լրսուած թէ ո՞վ էին հեղինակները, այլ միայն ճշգրտած թէ. «չէզոքացուած» էին: Միւս կողմէ, էլէֆիպէյ, Օգոստոս 12-ին դրօշի տակ կանչած է պահեստի այն զինուորները, որոնք ազատ արձակուած էին անցեալ տարի եւ առկախած նոր ազատ արձակումները եւ այս՝ «մինչեւ Հայերու հետ պատերազմի աւարտը»:

Յարձակումները կը շարունակուին Հայաստանի սահմանամերձ շրջաններուն վրայ: Օգոստոս 12-ին հինգ հոգի վիրաւորուած են Իջեւանի Այգեհատի եւ Արտամուտ գիւղերուն ռաբակոծութեան իրր հետեւանք: Նոյն օրը մինչեւ կէս գիշեր Նախիջեւանէն ռաբակոծուած է Վայքի Բարձրունի գիւղը: Հայ սահմանաքի Բարձրունի գիւղը: Հայ սահմանաքի պահներու պատասխան կրակոցներէն ետք Օգոստոս 13-ին ալ շարունակուած է ռաբակոծումը:

Վարդենիսի շրջանն ալ ենթակայ է կանոնաւոր հրետակոծութեան. 30 հրացունոց

ինկած է Վարդենիսի Սոթք գիւղին վրայ: Օգոստոս 12-ին ռաբակոծուած է նաեւ Եղէզնաձորի Սաչիկ գիւղը ուր աւերներ կան:

**

Օգոստոս 14-ին, Ուրբաթ առաւօտ մեր առած լուրերը Երեւանէն, հեռաձայնով, նոյնքան մտահոգիչ էին, ինչ կը վերաբերի Արցախի կացութեան: Նախորդ օրը եւ գիշերը (Օգոստոս 13), գրադով եւ գրադի աւելի կատարելագործուած տեսակով ռաբակոծուած են Ստեփանակերտ, Սոջալու, Նորագիւղ եւ Հաղրութ: Առաջին տուեալներով 9 մեռեալ կար Ստեփանակերտ, բայց այն համոզումը կար, գոյախտաբար, որ զոհերու թիւը աւելի մեծ պէտք է ըլլար: Մէկ մեռեալ ալ զոհ դացած էր Պառաւաքար:

**

Օգոստոս 13-ին Լեւոն Տէր - Պետրոսեանի նախագահութեամբ Ապահովութեան Սորհուրդի նիստ գումարուած է ուր քննարկուած է ԼՂՀ-ի եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններուն մէջ ստեղծուած ռազմական իրավիճակը: Յանձնարարականներ տրուած են պետական իշխանութեան տարբեր մարմիններու:

**

Երեւանի կրպակներուն մէջ կրկին յայտնուած է Արցախի Արցախ օրաթերթը որ նախապէս լոյս կը տեսնէր «Սորհրդային Ղարաբաղ» անունով ամէն օր, հայերէն եւ ռուսերէն տարբերակներով: Առ այժմ Մայիսէն ի վեր «Արցախ»ը լոյս կը տեսնէ շաբաթը 3 օր եւ միայն հայերէն:

**

Օգոստոս 11-ին Արտաքին նախարար Բաֆֆի Յովհաննէսեան ընդունած է Կրասնոսելսկի 2000 հոգիներու ռուս համայնքի ներկայացուցիչները որոնք պաշտպանութիւն խնդրած են ազրբեջանական դիրքերէ անընդհատ ռաբակոծուող իրենց շրջանին համար: Անոնք ըսած են թէ հակառակ յարձակումներուն պատճառով աւերներուն, իրենք մտադիր չեն այլուս փոխադրուելու, այդպէսով հերքելով Ազրբեջանցիներուն յերկրանքը թէ Ռուսները հալածանքի պատճառով կը լքեն Հայաստանը: Ռուս ընակչութեան ներկայացուցիչները հանդիպում ունեցած են նաեւ Ռուսաստանի դեսպանին հետ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՆԿԱՆՆԵՐՈՒ ԱԶԳ. ԿԵԴՐՈՒՆԻ նախագահը իր կնոջ եւ ութ տարեկան զակին հետ (նաեւ օդաչուն) զոհ դնաց օդանաւի արկածի մը, երբ Այաջիօ կ'երթար, ուր պիտի մասնակցէր Մատթթիթի վերաբերեալ հանրաժողովի մը: Իվոն Պրիան եւ բնտանիքը տեղ գրաւած էին Սեւնա 172 դրօսաչրջիկային օդանաւի մը մէջ, որ ճամբայ կ'ելլէր Գալփէն եւ որ քիչ ետք ճղմուած է բլուրի մը վրայ: Ծնած 1954-ին, Պրիան քաղաքական ուժեղ գէմք մըն էր: